«Վարկս Էյ Էմ»
ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

2017թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական հաշվետվություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ....3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն....5
Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն....6
Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն....7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն....8
Ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն....9

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 566 762
Ֆաքս + 374 (10) 566 762
Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական հաշվետվություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Վարկս էյ էմ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ
Տնօրենների խորհրդին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և համապատասխան ծանոթագրությունը, պատրաստվել են «Վարկս էյ էմ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի (Կազմակերպություն) 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր հաշվետվության ընթերցումը չի փոխարինում Կազմակերպության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացության ընթերցմանը:

Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք չձևափոխված կարծիք աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ 2018թ. հունիսի 29-ի մեր աուդիտորական եզրակացությունում:

Ղեկավարության պատասխանատվությունն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն,
շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International")
կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմք ընդունելով այն ընթացակարգերը, որոնք իրականացվել են Աուդիտի միջազգային ստանդարտ 810 (խմբագրված) *«Հաշվետվության ներկայացում ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ»* պահանջների համաձայն:

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-էմ-Զի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն

KPMG Armenia

«Քեյ-Փի-էմ-Զի Արմենիա» ՓԲԸ
29 հունիսի 2018թ.

	2017թ. հազ. դրամ	2016թ. նոյեմբերի 8-ից (հիմնադրման ամսաթիվ) 2016թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ
		Աուդիտի չենթարկված
Տոկոսային եկամուտ	1,600,459	1,479
Տոկոսային ծախս	(425,437)	-
Զուտ տոկոսային եկամուտ	**1,175,022**	**1,479**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	(6,684)	(28)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ ծախս	**(6,684)**	**(28)**
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(123,492)	-
Այլ գործառնական ծախսեր	(53,591)	-
Գործառնական եկամուտ	**991,255**	**1,451**
Արժեզրկումից կորուստներ	(798,982)	-
Աշխատակազմի գծով ծախսեր	(283,235)	(9,902)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(449,927)	(44,368)
Վնաս նախքան շահութահարկով հարկումը	**(540,889)**	**(52,819)**
Շահութահարկի գծով հատուցում	65,650	11,580
Վնաս և ընդամենը համապարփակ վնաս տարվա/ժամանակաշրջանի համար	**(475,239)**	**(41,239)**

5-ից 9-րդ էջերում ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2018թ. հունիսի 29-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Վարդան Հովսեփյան
Գործադիր տնօրեն

Քրիստինե Սելիմյան
Գլխավոր հաշվապահ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
		Աուդիտի չենթարկված
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	688,788	178,561
Հաճախորդներին տրված վարկեր	3,602,211	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	356,342	45,046
Հետաձգված հարկային ակտիվներ	77,230	11,580
Այլ ակտիվներ	47,161	933
Ընդամենը ակտիվներ	**4,771,732**	**236,120**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Վարկեր և փոխառություններ	4,652,246	-
Այլ պարտավորություններ	180,964	77,359
Ընդամենը պարտավորություններ	**4,833,210**	**77,359**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Բաժնետիրական կապիտալ	455,000	200,000
Կուտակված վնաս	(516,478)	(41,239)
Ընդամենը սեփական կապիտալ	**(61,478)**	**158,761**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**4,771,732**	**236,120**

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	2017թ. հազ. դրամ	2016թ. նոյեմբերի 8-ից (հիմնադրման ամսաթիվ) 2016թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ
		Աուդիտի չենթարկված
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված տոկոսներ	1,437,173	1,479
Վճարված տոկոսներ	(106,386)	-
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ	(3,270)	(28)
Զուտ ելքեր արտարժույթով գործառնությունների գծով	(21,026)	-
Այլ ստացված եկամուտ	116,953	-
Աշխատակազմի և այլ վարչական ծախսերի վճարում	(630,514)	(13,382)
Գործառնական ակտիվների (աճ) նվազում		
Հաճախորդներին տրված վարկեր	(4,406,605)	-
Այլ ակտիվներ	(27,371)	(196)
Գործառնական պարտավորությունների աճ (նվազում)		
Այլ պարտավորություններ	26,794	-
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր	**(3,614,252)**	**(12,127)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(359,506)	(9,312)
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր	**(359,506)**	**(9,312)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված վարկեր և փոխառություններ	4,856,428	-
Վարկերի և փոխառությունների մարում	(618,162)	-
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	255,000	200,000
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր	**4,493,266**	**200,000**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**519,508**	**178,561**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(9,281)	-
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի/ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	178,561	-
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի/ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**688,788**	**178,561**

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2016թ. նոյեմբերի 8-ի (հիմնադրման ամսաթիվ) դրությամբ (աուդիտի չենթարկված)	-	-	-
Ընդամենը համապարփակ վնաս			
Վնաս և ընդամենը համապարփակ վնաս ժամանակաշրջանի համար (աուդիտի չենթարկված)	-	(41,239)	(41,239)
Ընդամենը համապարփակ վնաս ժամանակաշրջանի համար	**-**	**(41,239)**	**(41,239)**
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում			
Թողարկված բաժնետոմսեր (աուդիտի չենթարկված)	200,000	-	200,000
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**200,000**	**-**	**200,000**
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտի չենթարկված)	**200,000**	**(41,239)**	**158,761**
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտի չենթարկված)	200,000	(41,239)	158,761
Ընդամենը համապարփակ վնաս			
Վնաս և ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	-	(475,239)	(475,239)
Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	**-**	**(475,239)**	**(475,239)**
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում			
Թողարկված բաժնետոմսեր	255,000	-	255,000
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**255,000**	**-**	**255,000**
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**455,000**	**(516,478)**	**(61,478)**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Պատրաստման հիմունքներ

Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Վարկս Էյ Էմ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի (Կազմակերպություն) Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ստորագրված 2018թ. հունիսի 29-ին: Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են միայն ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, որոնք վերցվել են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների 6-ից 9-րդ էջերից՝ առանց որևէ փոփոխության: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները: Կազմակերպության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները կարող են տրամադրվել ըստ պահանջի Կազմակերպության գլխամասային գրասենյակից (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Սարյանի փ. 12):